# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒԹՈՒՆՋԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏ
(XVII դ. երկրորդ կես)

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Արտասովոր ընթացք ուներ Հովհաննես Թութունջի հոգևորականի գործունեությունը: Առաջին անգամ նրան հիշում է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն ի «Օրագրության» մեջ, նշելով, որ 1650 թ. «Յովանէս անուն վարդապետ ոմն վանեցի եկեալ ի քաղաքս (Կ. Պոլիս – Վ. Վ.)»[1]: Տեղացի հոգևորականները չեն կամեցել, որ նա եկեղեցական կարգ ստանա, «բայց ի խնդրոյ ոմանց վանեցոց ծանօթից նմա՝ բերին և նստաւ յեկեղեցի Սուրբ Աստուածածնին»[2]:*

*Այդպիսով՝ Թութունջին դեռևս 1650 թ. Վանից մեկնելով Պոլիս, հաստատվում է Ս. Աստվածածին եկեղեցում՝ իր համաքաղաքացի վանեցիների օժանդակությամբ: Սակայն, ինչպես վկայում է նույն աղբյուրը, Թութունջին «բազում անհամութիւն և անկարգութիւն արարեալ և բազում դրամս ժողովեալ ի քաղաքէս»[3]: Նա նաև հայտարարում է, որ Հայոց կաթողիկոսի աշակերտն է: Բայց նույն ժամանակ Ծոփաց Պաղնատուն գավառի Արղնի (Արկնի) գյուղաքաղաքի մոտակայքի Բարձրահայաց Ս. Աստվածածին վանքի վանահայր (հետագայում Հայոց կաթողիկոս) Եղիազար Այնթապցին ժամանում է Պոլիս: Այդ մասին տեղեկանալով՝ Հովհաննես Թութունջին հեռանում է Պոլսից, «զի մի չար արասցէ իւրն»՝ կամենալով խուսափել պատժից իր կատարած չարաշահումների համար: Իսկ փոքր-ինչ անց Պոլիս է ժամանում Հայոց կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցին ու հայտնում, որ Թութունջին «սարկաւագ այլ չէ», և բանադրում է նրան: Բայց երկու տարի հետո՝ 1652 թ. սեպտեմբերին, Թութունջին վերստին գալիս է Պոլիս և, «հնազանդելով կաթողիկոսին», մեծագումար տուգանք է վճարում նրան: Կաթողիկոսը Թութունջիին կարգում է նվիրակ մոտակա գյուղերում[4]:*

*1662 թ. հունվարի 12-ին Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին Էջմիածնի պարտքերը մարելու համար լեհահայերի մոտ իբրև նվիրակ ուղարկում է «զսիրելի և զհաւատարիմ որդին մեր զտէր Ովանէս վարդապետն… հանդերձ սրբալոյս մեռոնաւ[5]»: Հովհաննես վարդապետն, անշուշտ, Հովհաննես Թութունջին էր, որը, ինչպես վերը ասվեց, տակավին*

---

[1] *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի, Յաւելուած. Ա. Թուղթեր, Բ. ուղերձներ, Գ. գանձեր և ողբեր, հրատ. Մ. արք. Նշանյան, Երուսաղէմ, 1939, էջ 19:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 32:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Ղ. Ալիշան. Կամենից, Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 257:*

*1652-ից վարում էր նվիրակի գործառույթը: Հակոբ կաթողիկոսի կողմից լեհահայոց Նիկողայոս արքեպիսկոպոսին և լեհահայ համայնքին ուղղված նամակում նշվում է, որ Հովհաննեսը պետք է «վարդապետական իշխանութեամբ» մեռոն բաշխեր «ի մէջ աստուածասէր և բարեպաշտ ուղղադաւան հաւատացելոցդ հայկազան սեռիդ»[6]: Նույն նամակում կաթողիկոսը լեհահայերին և նրանց հոգևոր առաջնորդին խնդրում է, որ «յորժամ հասցէ առ ձեզ սիրելի որդիտ մեր, սիրով և քաղցրութեամբ ընդունիջիք հարազատական լրջմտութեամբ պատուեալ մեծարեսջիք… յորդառատ սիրով և հեշտալրական քաղցրութեամբ ընծայեցէք զձեր հոգւոյ նուէրն զոր առ մեզ շնորհէիք… զի պարանոցաթաղ կեամք ի մէջ պարտուցն»[7]:*

*Հովհաննես Թութունջին, լիովին վայելելով Հայոց կաթողիկոսի վստահությունը, նրա հանձնարարական նամակով լեհահայ գաղթավայրում պետք է իրականացներ նվիրակի հույժ պատասխանատու գործառույթը՝ ի հակակշիռ լեհահայոց եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի և նրա հետևորդների, որոնց շնորհիվ պետք է ամրապնդվեր կաթողիկոսի իրավազորությունը լեհահայերի նկատմամբ, նրանց առնչակցելով Մայր Աթոռի հետ, ապահովելով ազգային-դավանական ընդհանրությունը: Դրան, անշուշտ, էականորեն նպաստելու էին լեհահայերի ինքնավար իրավունքները, որոնք հաստատվել էին լեհ թագավորների կողմից՝ դեռևս XIV դարից:*

*Սակայն Թութունջին հավաքած դրամը փոխանցում է ոչ թե Էջմիածին, այլ, մեկնելով Պոլիս, կաշառում է թուրք վեզիրին, տապալել տալիս Պոլսի հայոց պատրիարք Ղազար Սեբաստացուն և 1663 թ. բազմում նրա աթոռին՝ վերջինիս ախոյաններ Թլթյաններ հարուստ ու ազդեցիկ գերդաստանի օժանդակությամբ[8]: Թեև Թութունջին իրեն ներկայացնում էր որպես Հակոբ կաթողիկոսի համախոհ, որը, իբր, անթերի կերպով Էջմիածնի օգտին է գանձել հարկերը, սակայն կաթողիկոսը՝ տեղեկանալով Թութունջիի արարքների մասին, հատուկ թուղթ է ուղարկում պոլսեցիներին, նշելով, որ դեմ է նրա պատրիարքությանը[9]:*

*Ընդ որում՝ Երեմիա Քյոմուրճյանն իր թղթերից մեկում նշում է, որ Պոլսի հայոց պատրիարք Ստեփանոս Մեղրեցին (1670–1674) «ոչ է համեմատ Ղազար և Թութունճի և Սարգիս վատթարացն…»[10]: Նա նկատի ունի Պոլսի այս երեք պատրիարքների դրական վատնումները:*

*Հովհաննես Թութունջին անհաղորդ չէր 1660-ական թվականներին ծագած հայ ազատագրական շարժմանը: Նա իրատեսորեն հաշվի էր առնում այն ծանրակշիռ իրողությունը, որ օսմանյան պետության մեջ գործող հայկական երեք եկեղեցական կենտրոնները՝ Աղթամարի, Սսի կաթողիկոսությունները և Երուսաղեմի Հայոց պատրիարքությունն իրենց դիրքերը զիջել են Պոլսի Հայոց պատրիարքությանը, որը հոգևոր-եկեղեցական իրավազորություն ուներ նրանց նկատմամբ, նրա գերակա դիրքը ճանաչվում էր օսմանյան սուլթանների կողմից: Պատրիարքությունն ակնառու*

---

[6] *Նույն տեղում, էջ 258:*

[7] *Նույն տեղում:*

[8] *Մ. Չ ա մ չ ե ա ն. Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 692-693:*

[9] *Նույն տեղում, էջ 694:*

[10] *Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի, էջ 406:*

*դեր ուներ ազատագրական շարժման գործում: Իհարկե, Պոլսի պատրիարքության նկատմամբ առաջնություն ուներ Էջմիածնի կաթողիկոսությունը որպես Հայոց ընդհանրական Աթոռ: Ուստի, հայոց ազատագրական հույսերն առաջին հերթին լծորդվում էին այդ Աթոռի հետ: Հովհաննես Թութունջին հայ ազատագրական շարժումների ջատագով էր, բայց իր մեջ սնուցած ազատագրական մղումները գաղտնի էր պահում և զգուշավոր նկատառումներով աշխատում էր կասկածներ չհարուցել թուրքական իշխանությունների մոտ, ինչը հաճախ հաջողվում էր նրան:*

*Հովհաննես Թութունջին վայելում էր նաև Եղիազար Այնթափցու օժանդակությունը: Վերջինս 1664 թ. մտահղացավ Օսմանյան կայսրությունում ստեղծել Հայոց կաթողիկոսություն՝ Երուսաղեմ կենտրոնով, ինչը, բնականաբար, պառակտում էր գցելու Հայոց եկեղեցում, անշուշտ, նաև՝ ժողովրդի մեջ: Նույն տարվա ապրիլին Թութունջին գահընկեց արվեց՝ դրամական վատնումների պատճառով: Նրան փոխարինած Սարգիս Թեքիրդաղցին դեմ էր Եղիազար Այնթապցուն: Այդ հանգամանքը նպաստեց Սարգիս պատրիարքի ախոյան Թութունջիի և Եղիազար Այնթափցու մերձեցմանը: Վերջինս Օսմանյան կայսրության մեծ վեզիրի աջակցությամբ 1664 թ. Հալեպում Սսի կաթողիկոս Խաչատուրի կողմից օծվեց կաթողիկոս*[11]:

*Ստեղծված պայմաններում Սարգիս պատրիարքը միայն ինն ամիս գահակալեց, քանի որ 1665 թ. մայիսի վերջին Հովհաննես Թութունջին Թլթլյանների սատարմամբ կարողացավ կաշառքի միջոցով թուրք վեզիրի օգնությամբ վերստին հաստատվել Պոլսի հայոց պատրիարք*[12]: *Սակայն Թութունջիից դժգոհ էր Էջմիածնի Հակոբ կաթողիկոսը՝ նաև Եղիազար Այնթափցու հետ նրա մերձակցության պատճառով: Դա կանխորոշեց Թութունջիի պատրիարքական իշխանության ճակատագիրը: Վերջինս Հակոբ կաթողիկոսի կամքով 1667 թ. հուլիսին զրկվեց պատրիարքի իշխանությունից, և Պոլսի հայոց պատրիարքի աթոռին վերստին բազմեց Սարգիս Թեքիրդաղցին*[13]:

*Պոլսում կրած ձախողանքից հետո Հովհաննես Թութունջին վերադառնում է հայրենի Վասպուրական, որտեղ արդեն նա հայտնի անձնավորություն էր և մեծ համարում ուներ տեղի հոգևորականության մեջ: Նրան է վստահվում Վան քաղաքի հոգևոր առաջնորդի և Վարագավանքի վանահոր պաշտոնները (սրանք վարչականորեն միասին էին): Միաժամանակ նա կարգվում է Անձևացիք գավառի Հոգյաց վանքի, ինչպես և Վանից մոտ 7 կմ արևելք ընկած Սալնապատի Ս. Գրիգոր հոչակավոր վանքի առաջնորդ*[14]:

*Թութունջիի եկեղեցական լայնահուն ու արգասավոր գործունեությունն ավելի բարձրացնում է նրա հեղինակությունը: Ըստ Վասպուրականում*

---

[11] *Նույն տեղում, էջ 431, Սիմեոն Երևանցի. Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 239, Մ. Չամչեան. նշվ. աշխ., էջ 709:*

[12] *Մ. Չամչեան. նշվ. աշխ., էջ 696:*

[13] *Նույն տեղում, էջ 714-715:*

[14] *Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, հրատ. Գ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 105, տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ, հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 413:*

*գրված մի հիշատակարանի վկայության, 1669 թ. Հովհաննես Թութունջին արդեն բազմում է Աղթամարի կաթողիկոսի աթոռին: Հենց նույն թվականին ուժեղ երկրաշարժ է լինում Վանում և հարակից գավառում, որի հետևանքով փակվում է Վարագ լեռան ստորոտից սկիզբ առնող առուն, խափանվում վանքին սպասարկող ջրաղացի աշխատանքը: «Խափանեցաւ, – կարդում ենք նույն հիշատակարանում,– ճանապարհ ջրոյն, որ ի գետոյն անտի ի վերուստ բաժանէր եւ գայր ի վանքն եւ վարէր զջրաղացն վանիցն, և խանգարեցաւ ջրաղացն, եւ եղեալ պակասութիւն վանիցն, զի նովաւ կառաւարիւր վանքն եւ ալ ոչ գոյր հնար այլ ճանապարհաւ գալ ջրոյն այնորիկ… Վասն որոյ հանճարեղ խորհրդականն այն Յովհաննէս Վարդապետն… որոյ մականունն Թութունջի ասէին… հնարեաց այլ իմն կերպիւ բերել զջուրն ջրաղացին ի վանքն»[15]: Մեծ ջանքերի գնով Թութունջին «զանշարժ լեառն և զանհուն վէմն ետ կտրել քարահատացն, և որ անդէն կատարեցաւ հրաման, եւ կտրեցին զանբաւ արձանն… զանտանելի նեղութիւն և զանբաւելի ծախսն, որ ի վերայ եղեւ ոչ գոյր թիւ և ոչ համար…»[16]:*

*Հովհաննես Թութունջին Աղթամարի կաթողիկոսի պաշտոնում ծավալած եռանդուն գործունեությամբ ավելի մեծ հեղինակություն է ձեռք բերում Վասպուրականում: Սակայն օտար տիրապետության (Վանի փաշայության) ոլորտում գտնվող Աղթամարի կաթողիկոսության թեմերում հաճախակի էին բռնությունները, ապօրինությունները: Համաձայն թուրք պատմագիր Էվլիյա Չելեբիի, XVII դ. Վանի էյալեթում կային 700 «հարուստ ու բարեշեն» գյուղեր, որոնք հատկացված էին օսմանյան պաշտոնյաներին իբրև զիամեթ ու թիմար, այսինքն՝ ծառայության դիմաց որպես ռոճիկ տրված հողամասեր[17]: Աղթամարի կաթողիկոսության հոգևոր իրավասությանը ենթակա հայկական գյուղերը ևս թուրք և քուրդ փաշաների, բեկերի ենթակայության տակ էին:*

*Հովհաննես Թութունջիի կաթողիկոսության առաջին տարում՝ 1669 թ., Աղթամարին ենթակա Մոկսի Ավնդանց (Ավնդանք) գյուղում գրված Շարակնոցի հիշատակարանում նշված է՝ «դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ յանաւրինաց»[18]: 1672 թ. Մոկաց Խիզան քաղաքում գրված մի Տոնացույցի հիշատակարանում ևս շեշտվում է «դառն ու նեղ ժամանակը»[19]: Հետագա տարիներին նույնպես շարունակվել են հարկային կեղեքումները, բռնությունները:*

*Համաձայն Պոլսի 1902 թ. «Ընդարձակ օրացույցի», Հովհաննես Թութունջին Աղթամարի կաթողիկոս է եղել 1669–1683 թթ.[20]: Մինչդեռ նույն օրացույցի 1904 թ. հրատարակությունում Թութունջիի հայրապետության*

---

[15] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 105:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Է. Չ ե լ ե բ ի. թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Սաֆրաստյանի.– Թուրքական աղբյուրներ, հ. III, Երևան, 1967, էջ 243:*

[18] *Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց. հ. V, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 184:*

[19] *Յ. Բ ա ր ա ղ ա մ ե ա ն. Յուցակ ձեռագրաց Վասպուրականի.– Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. -6333, թ. 10ա:*

[20] *Ընդարձակ օրացույց 1902 թ. Ազգային հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1902, էջ 435:*

*տարիներ են նշված 1679–1681 թվականները[21]: Հովհաննես Թութունջին 1677 թ. հիշվում է Մոկս գյուղաքաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում եղած արձանագրության մեջ[22]: Այս վկայությունը կասկածի տակ է առնվել այն հիմամբ, որ Թութունջին հաջորդ՝ 1678 թվականին, ըստ իր թողած հիշատակարանի, մեկնել է Հաբեշստան, ուստի 1677-ին պետք է արդեն հեռացած լիներ Վանից[23]: Բայց Թութունջին նույն 1678 թ. նշում է. «Ես՝ Յովհաննէս վարդապետ և արքիեպիսկոպոս Շամիրամակերտոյ. կամեցայ գնալ ի Հապաշստան ի թուին Հայոց ՌՃԻԷ սեպտեմբերի ԺԷ»[24]: Հետևաբար, 1678 թվականին նա դեռ Վասպուրականում էր և իրեն հիշում է Շամիրամակերտի (Վան քաղաքի) արքեպիսկոպոսի պատվատիտղոսով:*

*Ի՞նչն է ստիպել Թութունջիին մեկնել Հաբեշստան: Ամենայն հավանականությամբ, նրան այդ քայլին են դրդել Եվրոպայի հակաթուրքական կոալիցիայի օգնությամբ Հայաստանն ազատագրելու մտումները: Արդյոք Թութունջիին՝ որպես ոչ սակավահայտ եկեղեցականի, Հաբեշստան էր ուղարկել նույն կոալիցիա՞ն: Այս մասին որևէ վկայություն չկա: Գուցե Թութունջին այդ երկիր է մեկնել իբրև արևմտահայերի ինքնահռչակ կաթողիկոս Եղիազար Այնթափցու պատվիրակ:*

*Նրա առաքելության նպատակն էր Եթովպիան ոտքի հանել օսմանյան պետության դեմ[25]: Եղիազար Այնթափցին հակված էր Լատին եկեղեցու կողմը՝ կամենալով նրա սատարմամբ ամրապնդել իր դիրքերը: Բայց Հաբեշստան մեկնելիս Թութունջին ներկայացել է որպես Վանի հոգևոր առաջնորդ, քանի որ հաբեշները հակակրանք ունեին Կաթոլիկ եկեղեցու նկատմամբ:*

*Հաբեշստան նրա ուղևորության տարում՝ 1678 թ., Էջմիածնում կայացած ժողովում որոշվում է պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ Հայաստանն ազատագրելու խնդրանքով: Այս փաստը վկայում է, որ արևմտահայ ազատագրական ձգտումները լծորդվում էին արևելահայ շարժման հետ:*

*Հովհաննես Թութունջին Հաբեշստանում հանդես էր գալու իբրև Աղթամարի կաթողիկոս, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը դիտվում էր որպես «թագավորական աթոռ» և բուն Հայաստանում Արծրունիների տոհմի ավանդները շարունակող, հետևաբար, Թութունջին ոտքի տակ հայրենի հաստատուն հող ուներ՝ իբրև հայության ազատագրական հույսերը*

---

[21] *Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1904, էջ 274: Նույն թվերն են օրացույցի 1905 թ. հրատարակության մեջ, իսկ 1908-ի հրատարակության մեջ նշված են 1669–1683 թթ.:*

[22] *Խ. Լ ևոնյան. Աղթամարայ կաթողիկոսները սկիզբեն ցվերջ.– «Բյուզանդիոն», 1903, դեկտեմբերի 5–18, -2196:*

[23] *Ա. Ալպոյաճյան. Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը ի Հապեշիստան ԺԷ դարուն, Գահիրե, 1946, էջ 44:*

[24] *Նույն տեղում, էջ 3: ՄՄ, -737 ձեռագրում առկա է Թութունջիի Ուղեգրության մեկ այլ տարբերակ, որտեղ, սակայն, չի նշվում Հաբեշստան նրա մեկնելու տարեթիվը (տե՛ս թ. 201ա): Այդ տարբերակը տե՛ս Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 301-306:*

[25] *Հ. Անասյան. նշվ. աշխ.., էջ 203-204: Դժվար է, սակայն, համաձայնել հարգարժան հետազոտողի այն կարծիքի հետ, որ Թութունջին Հաբեշստան ուղևորվելուց առաջ՝ 1678 թ., «արդեն եղել էր Փարիզում, և ինչպես երևում է, Լյուդովիկ XIV-ից ևս հանձնարարություններ էր ստացել հաբեշական արքունիքի համար» (նույն տեղում, էջ 204):*

*մարմնավորող: Նա Հաբեշստան է մեկնում՝ հայերի հետ համադավան այդ երկիրը հակաթուրք պայքարի մեջ ընդգրկելու հույսով: Հաբեշներն ակնկալիքներ ունեին եվրոպական զորքերի կողմից օսմանյան պետության դեմ մղվող պատերազմների նկատմամբ, քանի որ նրանք ևս ենթակա էին հարևան մահմեդական ցեղերի հարաժամյա սպառնալիքներին, կոտորածների վտանգին: Սակայն կաթոլիկ քարոզիչների (հիսուսյանների) կողմից Հաբեշստանում ծավալած քարոզչությունը խիստ բացասական արձագանք է գտնում այդ ժողովրդի մեջ: Բանը նույնիսկ այնտեղ է հասնում, որ հաբեշներն արգելում են եվրոպացիների մուտքը իրենց երկիր: Մինչդեռ հայերի նկատմամբ հաբեշները դրական դիրքորոշում ունեին[26], ուստի Հաբեշստան իր առաքելության ժամանակ Թութունջին ազատ ելումուտ ուներ այդ երկրում: Այդուամենայնիվ, հաբեշ հոգևորականները կասկածել և չեն վարանել հաճախակի դարձած հարցուփորձով ճշգրտել Թութունջիի դավանական կողմնորոշումը, ինչը, անշուշտ, չէր կարող չանհանգստացնել վերջինիս: Արդեն ասվեց, որ Թութունջին հետամուտ էր ոչ թե քարոզչական, այլ քաղաքական, ազատագրական նպատակների: Նա ինչպես նշում է իր Ուղեգրության մեջ, Հաբեշստանում կարողանում է մնալ չորս ամիս[27]:*

*Այդ ընթացում նա թեև արժանանում է երկրի թագավորի բարյացակամ վերաբերմունքին, սակայն չորս ամիս հետո, ինչպես ինքն է նշում, այլևս չի կարողանում մնալ Հաբեշստանում՝ «վասն օրինացն և հաւատոցն, որ վշտացուցանէին քահանայքն հարց և փորձ առնելով…»[28]: Ընդ որում, Թութունջին Հաբեշստան իր ուղևորությունն սկսել է Աղթամարից՝ Եգիպտոս մեկնելով, հավանաբար, ջանալով կապեր հաստատել տեղի քրիստոնյաների՝ դպտիների հոգևոր առաջնորդների և նրանց միջոցով նաև դպտիների պատրիարքին ենթարկվող հաբեշ հոգևոր այրերի հետ: Սակայն այդ հանգամանքը, ըստ երևույթին, չի ունեցել սպասված ներգործությունը:*

*Հովհաննես Թութունջին իր ուղեգնացության ընթացքում եղել է նաև աֆրիկյան ուրիշ երկրներում՝ Նուբիայում (որը կախվածության մեջ էր Հաբեշստանի թագավորից), Սուդանում: Այնուհետև նա մեկնում է Եվրոպա՝ Տոսկանայի դքսություն, վերջինիս մայրաքաղաք Լիվոռնոյում արժանանալով հյուրամեծար ընդունելության տեղի վերնախավի կողմից: Թութունջին գերադասում է Եվրոպա մեկնել ոչ թե Հաբեշստանից, այլ Եգիպտոսից, ուստի, աֆրիկյան երկրներում դեգերելուց հետո նա, ի վերջո,*

---

[26] *Հաբեշական Ժամանակագրության մեջ վկայված է տակավին XVI դ. սկզբներից Հայ և Հաբեշական եկեղեցիների միջև եղած դավանական մերձակցության մասին (*Б. Т у р а е в. Из армяно-абиссинских сношений.– Памятники эфиопской письменности, X. С. Петербург, 1912, с. 2–3*): Հայազգի Մատթեոսը XVI դ. սկզբներին Եթովպիայի արքունիքի վաճառականապետն էր, իսկ 1513-ից՝ Եթովպիայի դեսպանը Պորտուգալիայում (Հ. Գ ր ի գ ո ր. Եթովպիա Հայ եկեղեցին և հայերը, Վենետիկ, 1927, էջ 16-17):*

[27] *Հ. Անասյանը կարծում է, որ Թութունջիի Ուղեգրության մեջ նշված □ամիսս Դ (4)« թիվը »պետք է սկզբնագրում եղած լինի «ԺԴ» (Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 201, ծան. 1): Բայց Ուղեգրության մեզ հասած Կ.Պոլսի և Երևանի օրինակներում նշված է «Դ» թվատառը: Ընդսմին՝ Թութունջին գրում է, որ Հաբեշստանում «յունիսի ամսէն մինչ ի հոկտեմբեր ամիսն ձմեռն է. և այս Դ (4) ամիսս յամէն օր Բ (2) անգամ անձրև կուգայ… Եւ որչափ անձրև կու գայ այս Դ (4) ամիսս, ամէնն կու գնայ ի ծովակն մի…» (ՄՄ, ձեռ. -737, թ. 201բ): Անշուշտ, նա նկատի ունի այդ երկրում իր անցկացրած չորս ամիսները:*

[28] *ՄՄ, ձեռ. -737, թ. 202ա, Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., վավերագիր -10, էջ 305:*

*վերստին ժամանում է Եգիպտոս, որտեղից ծովային ուղիներով հասնում Իտալիա: Այս մասին նա հիշատակում է իր Ուղեգրության մեջ, նշելով, որ Ալեքսանդրիայից («ի Սքանդարիոյ») մեկնել է Իտալիա, նախ՝ եղել Մեսինա քաղաքում, ապա 1680 թ. սեպտեմբերին ժամանել Լիվոռնո՝ «յերկիրն Թուսկանաց Գռանդուկի (դքսի), որոյ տէր Աստուած յերկար կեանս տացէ նմա ամենայն տամբն իւրով՝ ի պարծանս քրիստոնէից և ի խնդութիւն տառապեալ ազգիս Հայոց»[29]:*

*Այս վկայությունից երևում է, որ Հովհաննես Թութունջին ժամանելով Իտալիա՝ Մեսինա քաղաք, ապա Լիվոռնո, ամենայն հավանականությամբ հանդիպում է Տոսկանայի դուքս Կոզմաս III-ի (1670–1723 թթ.) հետ, հայտնում իր ժամանման նպատակը, փորձում նրան ներգրավել հակաթուրքական կոալիցիայում: Լիվոռնոն Արևելքի հետ իտալական առևտրի հանգուցակետն էր: Ընդ որում, առաջինը հայերն էին, որ Տոսկանա են ներմուծել արևելյան ապրանքներ[30]: Տակավին 1642 թվականից քաղաքում հիմնվել էր հայկական տպարան[31]: Լիվոռնոյում հայտնի էր Միրմանյանների հայ ազնվականների գերդաստանը: 1582 թ. պարսից շահի կողմից խոջա Կիրակոս Միրմանյանը նշանակվում է հյուպատոս Տոսկանայում: Սակայն Տոսկանայի դուքսը, համաձայն եվրոպական մեծ տերությունների հետ կնքված դաշնագրի, պահպանելու էր չեզոքություն, որը հարգվելու էր այդ պետությունների կողմից[32]: Գուցե դուքսը խոստացել էր սատար կանգնել Թութունջիի մտահղացմանը: Նկատենք, որ նույն դուքսը նման խոստում էր տվել նաև Իսրայել Օրիին[33]:*

*Այնուհետև Թութունջին շարունակել է իր քաղաքական դեգերումները Եվրոպայում: 1670-ական թվականներից օսմանյան պետության դեմ մղված պատերազմում Վենետիկի հանրապետության կրած պարտությունից հետո հակաթուրքական պատերազմի ասպարեզ են մտնում Ավստրիան, Լեհաստանը, որոնց միանում է նաև Վենետիկի հանրապետությունը: Հավանաբար, Թութունջին Տոսկանայից մեկնել է Լեհաստան, թերևս ապավինելով այն հույսին, որ այդ պետությունը կարող է զորակցել հայերին: Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին դեռ 1678 թ., ի պատասխան Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու աղերսագրի, խոստացել էր վերականգնել Հայաստանի անկախությունը[34]: Բայց կաթողիկոսի մահը և թուրքական հարձակումներն ի դերև են հանում լեհական թագավորի խոստումը: Այդուհանդերձ, հայերը շարունակում են իրենց ազատագրական հույսերը կապել Լեհաստանի հետ: Ուշագրավ փաստ է, որ 1683 թ. թուրքերի դեմ մարտնչող լեհական զորքում կային 5000 լեհահայեր: Նույն*

---

[29] *ՄՄ, ձեռ. -737, թ. 202բ: Ուղեգրության Պոլսի Անտոնյան վանքի Մատենադարանի ձեռագիր օրինակում՝ «ի պարծանս ամենայն քրիստոնէից եւ ի գթութիւնս տառապեալ Հայոց ազգին պանդխտելոց ամէն» (Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. նշվ. աշխ., էջ 11):*

[30] *Մ. Ո ւ ղ ո ւ ր լ ե ա ն. Պատմութիւն Հայոց գաղթականութեան և շինութեան ի Լիվոռնոյ քաղաքի հանդերձ յաւելուածովք, Վենետիկ, 1891, էջ 45:*

[31] *Նույն տեղում, էջ 54:*

[32] *Նույն տեղում, էջ 20:*

[33] *Աշ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան, 1959, էջ 282-283:*

[34] Д ж. Г а л у с т я н. Армяне на дипломатической службе в Речи Посполитой в XVII в.– ИФЖ, 1971, № 2, с. 258.

*թվականի սեպտեմբերի 12-ին Վիեննայի մատույցներում լեհական և հակաթուրք կոալիցիայի մյուս երկրների բանակները վճռական հաղթանակ են տանում թուրքերի դեմ: Հովհաննես Թութունջին այդ հաղթանակի տարում փորձում է Հայաստանի ազատագրմանը նեցուկ դարձնել նաև Եվրոպայի հզորագույն կաթոլիկադավան երկրի՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին: Իր փառասիրությամբ աչքի ընկնող[35] այս արքան իրեն հռչակել էր որպես մոլեռանդ քրիստոնյա, որը նաև ամրապնդում է երկրի միասնությունը, իր հզորության գագաթնակետին հասցնելով Ֆրանսիան՝ շարժելով օտար պետությունների հիացմունքը, շլացումը, նաև խանդը[36]: Լյուդովիկոս XIV-ը հանդես էր գալիս որպես Արևելքի քրիստոնյաների «պաշտպան»: Համաձայն Մահտեսի Շահմուրատ Բաղիշեցու հիշատակարանի, 1683 թ. փետրվարի 2-ին Հովհաննես Թութունջին արդեն Վերսալում՝ Լյուդովիկոս XIV-ի արքունիքում էր: Նրա հետ էին սիսիանցի Զաքարիա վարդապետը՝ հայտնի իր լատինամետ ուղեգծով և ուրիշ հինգ հայեր, որոնք, ըստ երևույթին, նույնպես պատկանում էին լատինասեր հոսանքին: Ինքը՝ Մահտեսի Շահմուրատը նրանց հետ այցելել է Լյուդովիկոս XIV-ին: Նրանք պատշաճ ընդունելություն են գտել արքայի պալատում[37]: Այս հայերին միավորում էր հայրենիքի ազատագրության գաղափարը, և, փաստորեն, հանդես էին գալիս որպես հայ ժողովրդի լայն խավերում սնուցված ազատագրական ձգտումներն արտահայտող պատվիրակության անդամներ:*

*Հովհաննես Թութունջիին հաջողվել է թագավորի միջոցով վերականգնել Մարսելի հայկական տպարանի իրավունքները: Ամենայն հավանականությամբ, Լյուդովիկոս XIV-ի արքունիքում Թութունջին՝ որպես եկեղեցական հայտնի գործիչ, հանդես է եկել իբրև պատվիրակության ղեկավար, բանակցությունների մեջ մտնելով «արև-արքայի» հետ, որը ելնելով Արևելքում հետամտած նպատակներից, ուշադիր վերաբերմունք է ցուցաբերել պատվիրակության անդամների նկատմամբ: Ուշագրավ է, որ Մահտեսի Շահմուրատ Բաղիշեցին անթաքույց ոգևորությամբ գրում է. «Աստուած վայելել տացէ թագաւորին և ամենայն զաւակաց նորին, ընդ երկայն աւուրս, ի փառս Աստուծոյ և ի պարծանս ամենայն քրիստոնէից և ի ցնծութիւն տառապեալ ազգիս Հայոց»՝ չմոռանալով նշել, որ արքան «ուժով է և մալով. և կովարար զինուոր բազում և շատ ունի. դորա պարապար (հավասար – Վ. Վ.) չկայ է (7) թագաւորաց մէջն»[38]:*

*Հովհաննես Թութունջին Փարիզ էր հասել, անշուշտ, ակնկալելով, որ Եվրոպայի հզորագույն արքայի միջոցով հնարավոր կլինի ամրել հայրենիքի տառապանքները: Իսկ հայրենի երկրի վիճակը մնում էր ծանր: 1682 թ. Վասպուրականում ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում շեշտվում է, որ այն գրվել է «ի դառն և ի նեղ ժամանակիս. որ կամք գերի ի ձեռս այլասեռից ազանց. զոր Տէր Աստուածն ազատեսցէ*

[35] Л. С е н - С и м о н. Мемуары, т. II. М., 1991, с. 121–122.

[36] L. B e r t r a n d. Louis XIV, Paris. 1950, pp. 126–129.

[37] *Տե՛ս Մահտեսի Շահմուրատի հիշատակարանը.– Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., վավերագիր -12, էջ 315–318:*

[38] *Հ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 319:*

*զքրիստոնեայսն ի ձեռաց անօրինաց»[39]: 1683 թ. Վանա լճի Լիմ կղզում ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանում ևս արտացոլվել էր դառնադետ իրականությունը[40]:*

*Վասպուրականցի անանուն ժամանակագրողի կողմից «հանճարեղ խորհրդական» անվանված Հովհաննես Թութունջին ըստ նույն հեղինակի՝ «եղև գլուխ ազգին Ֆռանկաց և եկն ի վերայ Թուրքին»[41]: Ժամանակագիրը «ազգի ֆռանկաց» արտահայտության տակ, անշուշտ, նկատի է ունեցել Թութունջիի գլխավորած պատվիրակության լատինասեր անդամներին, նրանց դիտելով որպես «ֆռանկներ», այսինքն՝ կաթոլիկներ, թեև նրանց «կաթոլիկությունը» առերևույթ էր և ծառայում էր իբրև դիվանագիտական շղարշ՝ իրենց նպատակների կենսագործման ընթացքում[42]:*

*Սակայն զուր են անցնում Հովհաննես Թութունջիի և ազատագրական հույսեր փայփայած նրա գաղափարակիցների նպատակները: Եվրոպան տարված էր իրեն հուզող ներքին քաղաքական հարցերով և բնավ էլ մտադիր չէր զբաղվել հայերի ազատագրման խնդրով:*

*1698 թ. Հովհաննես Թութունջին հիշվում է Տրապիզոնում: Կարծվել է, որ նա ժամանել էր Լեհաստանի Կամենից քաղաքից[43]: Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին 1690-ական թվականներին ևս շարունակում էր հայերին հուսադրել: Նա բանակցությունների մեջ է մտնում Հայոց կաթողիկոս Նահապետ Եղեսացու (1691–1705 թթ.) հետ, խոստանալով վերականգնել Հայոց թագավորությունը[44]. գուցե Թութունջին մասնակցել է լեհական թագավորի հետ վարվող բանակցություններին, որպես եվրոպական իրականությանը լավատեղյակ անձնավորություն: Սակայն լեհ թագավորի մահը վերջ է դնում հայերի ազատագրական հույսերին:*

*Թութունջին իր կյանքի վերջալույսն անցկացնում է Տրապիզոնում, որտեղ 1698 թվականին տեղի Ամենափրկիչ վանքի առաջնորդ Հակոբ վարդապետի հետ հողին է հանձնում Կարապետ անունով պատանի նահատակի դին: Վերջինիս վկայաբանությունը տեղ է գտել Տրապիզոնի Չարխափան վանքում պահվող Հայսմավուրքում: Այդտեղ նշված է. «Ես Յովհաննէս վարդապետս որոյ մականուն Թութունջի կոչի, եւ առաջնորդ սուրբ Ամենափրկչին Յակոբ վարդապետ՝ եղեալ ականատես այս սուրբ նահատակիս, եւ ես Յովհաննէս արքեպիսկոպոսս ոտիւք իմովք ընթացայ եւ գրկախառն համբուրեցի, եւ փափագ ծնօղացն բազում խրատիւք մխիթարեցի… Հայոց ՌՃԽԷ» (1698)[45]:*

*Այնուհետև Հովհաննես Թութունջին հիշվում է 1704 թ., Չարխափան վանքի բակում գտեղված իր դամբանաքարի արձանագրության մեջ: Այդտեղ*

---

[39] *Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Ե. Լալայեան, պրակ I, Թիֆլիս, 1915, սյունակ 951:*

[40] *ՄՄ, ձեռ. -6333, թ. 79բ:*

[41] *Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 105, Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 413:*

[42] *Նկատենք նաև, որ այդ դարաշրջանում ևս դավանափոխ (կաթոլիկ) հայը համարվում էր այլազգի («ֆրանկ»):*

[43] *Ա. Մխիթարեան գ. Վէպ գաղթականութեան Հայոց Տրապիզոնու, Կ. Պոլիս, 1857, էջ 43:*

[44] Դ ж. Г а л у с т я н. *Նշվ. աշխ., էջ 258:*

[45] *Ա. Մխիթարեան գ. նշվ. աշխ., էջ 42-43:*

*նշվում է, որ հանգուցյալը «Սուրբ Էջմիածնայ նուիրակ…» էր, որի միջոցով Ամենափրկիչ վանք էր բերվել Տիրամոր պատկերն ու խաչկալը[46]: Ըստ այդմ՝ Հովհաննես Թութունջին 1698–1704 թվականներին ապրել է Տրապիզոնում, հավանաբար կատարելով նվիրակի պարտավորությունները:*

*Այդպիսով՝ Հովհաննես Թութունջին XVII դ. երկրորդ կեսին ծավալած գործունեությամբ փորձեց իր նպաստը բերել հայ ազատագրական շարժմանը, իրականացնել հարազատ ժողովրդի մեջ թևածող անկախության նվիրական գաղափարը: Սակայն նրան չվիճակվեց տեսնել իր փայփայած ծրագրի կենսագործումը:*

## ОВАННЕС ТУТУНЧИ–ЦЕРКОВНЫЙ ДЕЯТЕЛЬ И ДИПЛОМАТ

(Вторая половина XVII в.)

*ВРЕЖ ВАРДАНЯН*

Р е з ю м е

Ованнес Тутунчи–армянский церковный деятель второй половины XVII в. В 1652 г. он из родного города Ван переехал в Константинополь. Католикос всех армян Филиппос Албакеци назначил его нвираком (духовное лицо, собирающее приношения Эчмиадзинскому католикосату). В начале 1660-х гг. Ованнес Тутунчи вступил на престол Константинопольского Армянского патриаршества. В 1667 г. Ованнес Тутунчи возвратился в родной город Ван и взял на себя обязанности духовного пастыря Вана и Варагского монастыря. В 1669 г. он вступил на престол Ахтамарского католикосата и развернул плодотворную деятельность в регионе. В 1678 г. Ованнес Тутунчи как активный деятель армянского освободительного движения отправился в Абиссинию, затем в Италию, в столицу Тоскании Ливорно, оттуда – в Польшу. В 1683 г. Ованнес Тутунчи вел переговоры с королем Франции Людовиком XIV, надеясь с его помощью освободить армян от османского господства. Однако надежды Ованнеса Тутунчи не оправдались. С 1698 года он жил в городе Трапезунде, где и скончался в 1704 г.

[46] *Նույն տեղում, էջ 41-42:*

# HOVHANNES TUTUNJI – A CLERGYMAN AND DIPLOMAT
(The second half of the 17th c.)

*VREZH VARDANYAN*

S u m m a r y

Hovhannes Tutunji was a famous Armenian clergyman of the second half of the 17th c. In 1652 he moved from his home town Van into Constantinople and was appointed nvirak (ecclesiastic-gatherer offerings for Echmiadzin catholicosate) by order of his Holiness Philippos Albaketsi, Catholicos of All Armenians. At the beginning of the 1660s he came to the throne of Armenian patriarchate of Constantinople. In 1667 Hovhannes Tutunji returned to his home town Van , carried out the paster's duties in Van and in the church of Varag. In 1669 he became the Catholicos in Akhtamar and developed fruitful activities in the region. In 1678 Hovhannes Tutunji as an active figure of Armenian liberation movement arrived in Abyssini, then he went to Italy – to Livorno, the capital of Tuscany and from there to Poland. In 1683 Hovhannes Tutunji carried on negotiations with the king of France Louis XIV for liberating Armenia from the Ottoman rule. However, his hopes weren't justified. Since 1698 he had lived in Trebizond where he died in 1704.